

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

5-6.95



ՀԱՆՈՒՆ ԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ



Հայաստանի Հանրապետության նախագահ **Լևոն Տեր-Պետրոսյանը**
և ՍԱՀ-ի գլխավոր քարտուղար **Բուդրոս Ղալին** (Երևան, 1994 թ.)

ՀՀ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Լուս է տեսնում 1995 թվականից
տարին կեզ անգամ

5-6.1995

Ժառայողական օգտագործման համար • № 000049 *

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն
Կ Ո Լ Ե Գ Ի Ա

Ծիրխանջան Վ. Գ.
(նախագահ)
Քոբանջյան Հ. Ս.
(գլխավոր խմբագիր)
Աբրահամյան Մ. Ա.
Ավետիսյան Մ. Վ.
Գորդիենկո Ի. Վ.
Խորխորովնի Վ. Վ.
Հայրապետյան Վ. Ա.
Հարոյան Հ. Վ.
Հարությունյան Ա. Թ.
Հարությունյան Գ. Բ.
Հարությունյան Մ. Հ.
Մարդանյան Ա. Գ.
Մարտիրոսով Լ. Ա.
Միրզոյան Ս. Վ.
Չախոսվարյան Ս. Ն.
Պետրոսյան Ա. Ա.
Պետրոսյան Ա. Ա.
Պետրոսյան Գ. Լ.
Սարգսյան Ա. Գ.
Սարգսյան Ա. Ե.
Սարգսյան Մ. Ս.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Տեր-Թադևոսով Ա. Ի.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Մ. Լ. Կարապետյան, Հայաստանի Հանրապետության քանակի կազմավորումը (1918—1920 թթ.) . . . 3

ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊՈՒԹՅՈՒՆ

Մ. Գ. Մելքոնյան, Թուրքիայի ռազմական քաղաքանության ուրվագիծ 24

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵԲԻ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Հ. Զահիրաբեկյան, Հայաստանի Հանրապետության քանակի կարգապահական կանոնադրության նախագիծը 32

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

Ա. Ե. Սարգսյան, Գիտատեխնիկական հետախուզությունը և պատեհելիատվությունը 42

Է. Մ. Թոշարյան, Կառավարման միջոցների և համակարգերի ռադիոէլեկտրոնային պաշտպանությունը 50

ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն. Մ. Մուրադյան, Հրետանու նախապատրաստումը լնոնային պայմաններում կրակի վարմանը և կառավարմանը 67

ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ռ. Խ. Գրիգորյան, ՈՒսումնավարժական միջոցների՝ վարժասարքերի և նախանակիչ համալիրների, ստեղծման ժամանակակից ուղիները 79

ՀՕՊԻ ԶՈՐՔԵՐՈՒՄ

Վ. Ա. Կարոյան, Ցամաքային զորքերի ՀՕՊԻ կազմակերպումը, մարտական հնարավորությունները և կիրառման ակվեունքները 94

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆ ՊՈՒԹՅՈՒՆ

Վ. Խ. Բաղդասարյան, Համարի քառարան 102

«АЙКАКАН БАНАК» («Армянская армия»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
N 5-6, 1995
Издается 6 раз в год

Редакционная коллегия:

В. Г. Ширханян (председатель); Г. С. Котанджян (главный редактор);
М. А. Абрамян; М. В. Аветисян; В. А. Айрапетян; А. В. Ароян; А. Т. Арутюнян;
Г. Б. Арутюнян; М. А. Арутюнян; И. В. Гордиенко; А. Г. Марданян; Л. А. Мартиросов;
С. В. Мирзоян; А. А. Петросян; А. С. Петросян; Г. Л. Петросян; А. Г. Саркисян;
А. Е. Саркисян; М. С. Саркисян; Н. Г. Тер-Григоряնц; А. И. Тер-Татевосов;
В. В. Хорхоруни; С. Н. Шахсуварян.

Научное консультирование и редактирование

генерал-майор М. А. Абрамян; подполковник, г. мед. н., профессор Б. Н. Арутюнян;
к. филос. н., доцент В. Х. Багдасарян; подполковник, д. ист. н., профессор Б. П. Балаин;
полковник, д. полит. наук, профессор Г. С. Котанджян;
генерал-майор С. С. Мартиросян; г. ист. н., проф. Р. Г. Саакян,
майор, д. тех. н. А. Е. Саркисян; генерал-лейтенант Н. Г. Тер-Григоряնц.

«HAIKAKAN BANAK»
MILITARY-SCIENTIFIC JOURNAL
OF THE MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
N 5-6, 1995
Is published 6 times a year.

Editorial board:

V. G. Shirkhanian (Chairman), H. S. Kotanjian (Editor-in-chief),
M. A. Abrahamian, M. V. Avetisian, I. V. Gordienko, V. A. Hairapetian, H. V. Haroian,
A. T. Haroutunian, G. B. Haroutunian, M. H. Haroutunian, V. V. Khorkhoruny, A. G. Mardanian,
L. A. Martirosov, S. V. Mirzoyan, A. A. Petrosian, A. S. Petrosian, G. L. Petrosian, A. E. Sarkisian,
A. G. Sarkisian, M. S. Sarkisian, S. N. Shahsouvarian, N. G. Ter-Grigoriants, A. I. Ter-Tatevosov.

Scientific Consultations and Editing:

M. A. Abrahamian, Major-General; V. Kh. Baghdasarian, Ass.-Prof., Ph. D. (Philosophy);
B. P. Balaian, Lieutenant-Colonel, Prof., Dr. of Hist. Sc.;
B. N. Haroutunian, Lieutenant-Colonel, Prof., Dr. of Medicine; H. S. Kotanjian, Colonel, Prof., Dr. of Polit. Sc.;
S. S. Martirosonian, Major-General; R. G. Sahakian, Prof., Dr. of Hist. Sc.;
A. E. Sarkisian, Major, Dr. of Tech. Sc.; N. G. Ter-Grigoriants, Lieutenant-General.

ՈԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ
(1918—1920 թթ.)

Մ. Լ. ԿԱՐՄԱՆՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու

1918 թ. մայիսի 28-ին չափազանց դժվարին արտաքին ու ներքին պայմաններում վերականգնվեց հայկական պետականությունը. ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը:

Հանրապետության ստեղծումից ասմիջապես հետո նրա առջև ծառացած առաջնահերթ հիմնահարցների շարքում կարևորագույն տեղ էր գրավում վիճակած ուժերի կազմակերպման խնդիրը: Հատկանշական է, որ երբ թիֆլիսում կազմակերպվեց Հայաստանի Հանրապետության առաջին կառավարությունը՝ Հովհաննես Քաջազնունու վարչապետությամբ, առաջին նախարարությունների թվում էր վիճական նախարարությունը՝ ուսուական բանակի գեներալ-մայոր Հովհաննես Բարսեղի Հայվերդյանի (Խան Վասիլիչ Ախվերդովի) գլխավորությամբ: Ձեն Բարսեղի պայմանագրով Հայաստանի Հանրապետության վիճակը ուժերի կազմակերպման գործը մի շաբթ լուրջ խոշընդուների հետ էր կապված¹, պյուտամնայնիվ նորաստեղծ հանրապետության կառավարությունը ձեռնամուխ եղավ սեփական

¹ 1918 թ. հունիսի 4-ին Ձուրբիայի և Հայաստանի Հանրապետության միջև Բարտումում կլրպահած առանձին լրացրուցիչ պայմանագրով, որը բարեկասած էր 6 հիմնական հոդվածներից, Հայաստանի Հանրապետությանը թույլատրված վիճակը ուժերի թվաքանակը, ինչպես նաև կրանց տեղաբաշխությունը ըստ տարածաշրջանների պիտք է որոշվեին թուրքական կառավարության կողմից (հոդված առաջին): Բայց դրանից, Հայաստանի կառավարությունը պարտավորվեց էր անհապաղ վտարել իր տարածքում նյած, թուրքիայի և նրա դաշնակիցների դեմ պատերազմի մեջ գտնվող երկրությունը սպաներին ու բազարացիներին: Հայաստանին արգելվում էր նաև մինչև համաշխարհային պատերազմի ավարտը ծառայության վերցնել այդ երկրների սպաների և այլ անձանց (հոդված երկրորդ):

վիճակած ուժերի կազմակերպման գործին:

Հայաստանի Հանրապետության վիճակած ուժերի հիմքը կազմեցին հայկական բանական կազմության կորպուսի (կոչվել է նաև առանձին հայկական կորպուս) զորամասերը և սոորաբաժանումները: Այն կազմավորվել էր դեռ 1917 թ. վերջին ոռւսական բանակի կազմում գործող հայկական կամավորական ջոկատների հիմքի վառ, թիֆլիսի Հայոց պագային խորհրդի վիճակության մարմնի անմիջական շանքերով, թուրքական ներխուժման դեմ պայքարելու նպատակով²:

Ռուսական բանակի Կովկասյան և Արևմտյան ռազմաճակատներում մարտրնչող հայ ապաներին և վիճակուներին կորպուսի կազմում համախմբելու անհրաժեշտությունն առաջացավ ոռւսական բանակի կողմից Կովկասյան ռազմաճակատի գանգվածային լրումից ու մերկացումից հետո, ինչը 1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցած հեղաշրջման և բոլշևիկյան կուսակցության վարած քաղաքականության հետևանք էր:

Պայմանագրի մյուս կետերը վերաբերում էին Հայաստանի վրայով տարանցիկ փոխադրումներ իրավանացներու՝ թուրքական բանակին տրվող իրավունքին (հոդված 3—4-րդ), ռազմազերին փոխանակման մասին կուսինցիայի պայմանների ճշգրիտ կատարմանը երկու երկրների կողմից (հոդված հինգերորդ) և նույն պայմանագրի վավերացման ժամկետների հատկացմանը (հոդված վեցերորդ): Տե՛ս Ե. Կ. Սարկսիան. Իշտորություն առ 1918 թ., Ե., 1970, ս. 163—167.

² Հայկական կորպուսի կազմավորման մասին մանդաման տես Ա. Հ. Հարությունյան, Ձուրբական ինտերվինցիան Անդրդրվաս 1918 թ. և ինքնապաշտպանական կոիվները, Ե., 1984, Մ. Լ. Կարմանյան, Հայկական պագային բանակային կորպուսի ստեղծման պատմություննից, «Բանքեր Երևանի համալսարանին», Ե., 1994, հմ. 1, էջ 3—12:

Հայկական կորպուսի ստեղծման գործում անմիջական մասնակցություն են ունեցել աշխափի գործիչներ, ինչպիսիք են Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի վիճակորական մարմնի ղեկավարներ Ստեփան Սամիկոնյանը, Արսեն Շահմայյանը, Ռուբեն Տեր Մինասյանը, Արամայիս Երվանկյանը, Երևանի Հայոց ազգային խորհրդի նախագահ Արամ Մանուկյանը, նրա գործադիր մարմնի՝ Հատուկ կոմիտեի, նախագահ Արշակույս Աստվածատրյանը, Երևանի հայ վիճակորական միության նախագահ քժիշտ Հովհաննի Մելիքյանը և ուրիշներ:

Հայկական կորպուսի հրամանատարն էր ռուսական բանակի փորձված և հմուտ զորավար գեներալ-լեյտենանտ Թովմա Հովհաննեսի Նազարենկյանը (Ֆոմա Խվանովիչ Նազարենկով), շտարի (սպայակույտի) պետը՝ գեներալ-մայոր Եվգենի Եվգենիչ Վիշինսկին, իսկ կոմիսարը՝ Դրաստամատ Կանայանը (Դրո):

Կորպուսի կազմում կային երկու հրաձգային դիվիզիա՝ յուրաքանչյուրը կազմված չորս հրաձգային գնդից և մեկ հրաձգային-հենտանային բրիգադից, առանձին հեծելազորային բրիգադ՝ կազմված երկու հեծելազորային գնդից, բերդապահ հետևակային բրիգադ՝ կազմված հինգ հետևակային գնդից, պահենատային բրիգադ՝ բաղկացած երկու հետևակային գնդից և չորս գումարտակից, հավաքական զորագույն և մի շարք այլ առանձին և մասնագիտացված զորամասեր ու ստորաբաժանումներ:

1918 թ. մարտի 31-ի տվյալներով հայկական կորպուսի զորամիավորումների խմբավորումները և մարտուական կազմը ունեին հետևյալ պատկերը. Բնագլի Ահմենի զորացոլատ՝ թվով 11 գումարտակ, 14 լեռնային, 4 թիվն թնդանոթ, 8 հեծելազորային էսկադրոն, Կաղզովանի զորացոլատ՝ 1 գումարտակ և 130 հեծելազորային, Երևանի զորացոլատ՝ 14 գումարտակ, 12 լեռնային, 6

³Տես Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պիտական արխիվ (այսուհետեւ՝ ՀՀ ՊԿԱԸ), ֆ. 204, գ. 1, գ. 42, թ. 1-5:

թիվն թնդանոթ և 3 հարյուրյակ, կորպուսի պահեստավորային ուժերի կազմում կային 11 գումարտակ, լուրամենը՝ 37 գումարտակ, 26 լեռնային և 10 թիվն թնդանոթներ, 170 գնդապիր, 12 հեծելազորային էսկադրոն և 3 հարյուրյակ, որոնցում կար 16715 հետևակ ու հնձյալ զինվոր և 600 սպա⁴:

Հայկական կորպուսի այդ զորամասերի ուսերին էր ընկել 1918 թ. հունվար—մայիս ամիսներին Անդրկովկասի վրա Թուրքիայի կատարած արշավանքին, թվապես կորպուսին մի քանի անգամ գերազանցող նրա կանոնավոր զորաբանակներին դիմակայելու ողջ ժանրությունը: Մայիսի 22-ից 29-ը տեղի ունեցած Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաբիլսայի հերոսամարտներում ձեռք բերված հաղթանակները հայկական կորպուսի զորամասերի հերոսական շանքերի արդյունքն էին և ունեցան հիրավի պատմական նշանակություն: Այդ հերոսամարտների շնորհիվ ոչ միայն արևելահայությունը փիկվեց ֆիշիկական բնաջնջման սպառնալիքից, այլև քուրքերն ստիպված եղան հաշվի նաև պետականություն ստեղծելու հայ ժողովրդի կամքի հետ:

Թուրքական զորքերի դեմ մղված մայիսյան կոփիվներում աշքի ընկան հատկապես կորպուսի 2-րդ հրաձգային դիվիզիան, նրա հրամանատար գեներալ-մայոր Մովսես Միլիկյանը (Մովսես Միլիկով), զորամիավոր հրամանատար գնդապիտ Դանիել Բեկ Փիրումյանը, 5-րդ գնդի հրամանատար գնդապիտ Պավել Բեկ Փիրումյանը, հեծելազորային գունդը, որի հրամանատարն էր հեծելազորի գնդապիտ Կոստանդին Նորդանյանը (Կորգանով), հատուկ դարաբարյան ջոկատը՝ գնդապիտ Պավել Մելիք Շահնազարյանի հրամանատարությամբ, Պարտիզանական կոչվող գունդը գնդապիտ Վասիլ Պերելըրոսովի հրամանատարությամբ, հետևազորի փոխգնդապիտ Ալեքսանդր Վերիլյանը (Վերիլով), հրետափորի կապիտաններ Նիկոլայ Վիշը, Ալեքսանդր Շնեուրը, Վաղիմիր Սա-

⁴Տես ՀՀ ՊԿԱԸ, ֆ. 121, գ. 2, գ. 88, թ. 1:

կիլլարին և շատ ուրիշներ: Նրանք բոլորն էլ հետագայում կարենոր դեր կատարեցին Հայաստանի առաջին հանրապետության բանակի կայացման գործում:

Բանի որ Բաթումի պայմանագրով ժուրիխան «Քույլ էր տալիս» Հայաստանի նորաստեղծ հանրապետությանը ունենալ վիճակը ուժեր, որոնք չպետք է գերազանցեն մենք հետևակային դիվիվիան⁵, ուստի հայկական բանակային կորպուսը, որը, ինչպես վերը նշվեց, բաղկացած էր երկու հրաձգային դիվիվիայից, հրաձգային-հրետանային, հետևակային, հեծելազորային, պահեստային բրիգադներից, հավաքական զորացկատից և այլ առանձին ու մասնագիտացված զորամասերից ու ստորաբաժանումներից, ենթարկվեց վերակազմավորման, որպեսզի փոխարենք ստեղծվի մեկ հետևակային դիվիվիա: Վերակազմավորման աշխատանքներն սկսվեցին կորպուսի հրամանատար գեներալ Ռ. Նազարենյանի 1918 թ. հուլիսի 20-ի հմ. 94 հրամանով, որի համաձայն կորպուսից անմիջապես զորացրվում էին արտահաստիքային, զորամասներում ու վարչություններում հետագա ծառայության համար այլևս ավելորդ օտարազգի սպաները և դասային աստիճանավորները, ինչպես նաև այն սպաներն ու աստիճանավորները, որոնք առողջական վիճակով այլևս պիտանի չեն բանակում ծառայության համար⁶:

Կազմավորվող Հայկական առանձին դիվիվիայի հրամանատար է նշանակվում նախկին հայկական կորպուսի 2-րդ հրաձգային դիվիվիայի հրամանատար, ոուսական բանակի գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը: Նրա հրամանատարությամբ հայկական կորպուսի 2-րդ դիվիվիայի աստորաբաժանումները աշքի էին ընկել դեռևս Սարդարապատի 1918 թ. մայիսյան հերոսամարտում:

Հայկական դիվիվիայի հրամանատար գեներալ-մայոր Մ. Սիլիկյանի 1918 թ. օգոստոսի 1-ի հմ. 1 հրամանով առանձին դիվիվիայի շտաբի պետ նշանակվեց

փոխգնդապետ Ալեքսանդր Վերիյանը: Քիչ ուշ, փոխգնդապետ Վերիյանի փոխարեն, շտաբի պետի պարտականությունները հանձնվեցին գնդապետ Զինկիշինի⁷:

Գեներալ Միլիկյանի օգոստոսի 9-ի հմ. 3 հրամանում սահմանվում էր, որ հայկական կորպուսի վերակազմավորման և առանձին դիվիվիայի ստեղծման աշխատանքները պետք է ավարտվեն նույն թվականի օգոստոսի 15-ին: «Օգոստոսի 15-ից, — ասված է նշված հրամանում, — բոլոր նախկին զորամասերը, բայց կորպուսի շտաբից և վարչություններից, ... կիամարզեն գոյություն չունեցող, և բոլոր վիճառայողները, ովքեր չեն մտնի հայկական հետևակային դիվիվիայի կազմի մեջ, կըրկվեն պետական դրամական, ինչպես նաև այլ բոլոր տեսակի բավարարությաց»⁸: Նշենք, որ հայկական առանձին դիվիվիայի հրամանատարը բոլոր հարցերով անմիջականորեն ենթարկվում էր Հայաստանի Հանրապետության վիճառական նախարարին⁹:

1918 թ. աշնան դրությամբ հայկական առանձին դիվիվիան բաղկացած էր վեց հետևակային գնդից, որոնցից յուրաքանչյուրում կար երեք գումարտակ: Այդ գնդերը միավորված էին հետևակային երկու բրիգադի մեջ, որոնցից յուրաքանչյուրում կար երեք գունդ: Դիվիվիայի հրետանին կազմված էր հրետանային մեկ բրիգադից և ուներ երկու թերթ, չորս լեռնային և մեկ հաւորիցային մարտկոցներ, որոնք միավորված էին երեք (մեկ թերթ և երկու լեռնային) հրետանային դիվիվիոննի ու հրետանային հավաքակազմի մեջ: Դիվիվիայի հեծելազորը կազմում էր մի հավաքական հեծյալ գունդ: Այս զորամասերից բայց դիվիվիայի կազմում կային ճարտարագործական (ինժեներական) վաշտ, ավիայիոն ու ռադիոհեռոգրային ջոկեր, ավտոմոբիլային և ուսումնական զորամբեր, դիվիվիայի տրանսպորտի ստորաբաժա-

⁵ Տես ՀՀ ՊԿԱ, ֆ. 222, գ. 1, գ. 24, թ. 323:

⁶ Տես ՀՀ ՊԿԱ, ֆ. 204, գ. 1, գ. 47, թ. 1:

⁷ Տես նույն տեղում, ց. 1, գ. 42, թ. 12:

⁸ Տես նույն տեղում, թ. 13:

⁹ Տես ՀՀ ՊԿԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 2:

նում, վիրակապող ջոկատ և անասնաբուժական լազարեթ¹⁰:

Հայկական դիվիզիայի գորամասերում հրամանատարներ նշանակվեցին ոռուսական բանակի շարքերում մարտական դպրոց անցած փորձառու կադրային սպաներ: Այսպես՝ դիվիզիայի համբարակի (ինտենդանտի), բժշկի, անասնաբույժի և ճարտարագետի պաշտոններին նշանակվեցին, համապատասխանաբար, դասային աստիճանավորներ Տրոիցիկին, Տեր Միքայելյանը, բժիշկ Պիրիբիլակին և փոխգնդապետ Կելլերը: Առաջին հետևակային բրիգադի հրամանատար նշանակվեց գնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Դանիել Բենկ Փիրումյանը, երկրորդ բրիգադի՝ գնդապետ Բաղդասարյանը: 1-ին բրիգադը կազմող 2-րդ և 3-րդ հետևակային գնդերի հրամանատարներ նշանակվեցին գնդապետներ Սամոյելնկոն և Դոլուխանյանը, իսկ 2-րդ հետևակային բրիգադը կազմող 4-րդ, 5-րդ, 6-րդ գնդերի հրամանատարներ էին նշանակվել գլուխապետներ Պերենկրյոստովը, Կազմիրսկին և Տիմչենկու: Դիվիզիայի հրետանային բրիգադի հրամանատարությունը հանձնվեց գնդապետ Քրիստափոր Արարատյանին (Խրիստոֆոր Արարատով): Հետևանային բրիգադի 1-ին թերթի դիվիզիոնի հրամանատար նշանակվեց կապիտան Բաղդասարյանը: Իսկ այդ դիվիզիոնը կազմող 1-ին և 2-րդ հրետանային մարտկոցների հրամանատարներն էին պորուչիկ Վիլչը և շտաբս-կապիտան Վեքիլովը: Երկրորդ լեռնային դիվիզիոնի հրամանատար էր նշանակվել փոխգնդապետ Միկորովին, իսկ դիվիզիոնի կազմի մեջ մտնող 3-րդ և 4-րդ լեռնային մարտկոցների հրամանատարությունները վստահված էին շտաբս-կապիտան Կուսիկովին և կապիտան Առուշանյանին: Երրորդ լեռնային դիվիզիոնի հրամանատարությունը ստանձնել էր փոխգնդապետ Խոմելկովը, իսկ այդ դիվիզիոնը կազմող 5-րդ, 6-րդ և 7-րդ մարտկոցներում հրամանատարներ էին նշանակվել շտաբս-կապիտան-



Քրիստափոր Արարատյան,
գեներալ-մայոր,
Հայաստանի Հանրապետության
վինդուրական նախարար

ներ Պրիտիսանովը, Սակիլլարին և Սամուկովը:

Դիվիզիայի հավաքական հեծենազորային գնդի հրամանատար նշանակվեց գնդապետ Կոստանդին Ղորլանյանը: Ավիացիոն և ռադիոհեռագրային ջոկերի, ավտոմոբիլային գորախմբի, դիվիզիայի տրանսպորտի ստորաբաժնման և ուսումնական վորախմբի հրամանատարությունները հանձնված էին, համապատասխանաբար, պորուչիկ Վոլապովին, փոխապրուչիկ Տեր Սկրտչյանին, ենթասպաններ Վանեցյանին, Օհանյան-յին և փոխգնդապետ Սորենցիոն¹¹:

Հայկական առանձին դիվիզիայի այս կառուցվածքը պահպանվեց մինչև 1918 թ. վերջը և փոփոխությունների ենթարկեց 1919 թ. հունվարին, իսչը պայմանավորված էր առաջին աշխարհամարտում Շուրքիայի կրած պարտությամբ, որի հետևանքով Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն ստա-

¹⁰ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 204, գ. 1, գ. 42, թ. 4:

¹¹ Տես նույն տեղում, թ. 12:

յավ կտրուկ կերպով ավելացնելու իր պիհնված ուժերի թվաքանակը:

Մինչև 1918 թ. հոկտեմբեր ամիսը Երևանում ավարտվելին նաև Հայաստանի Հանրապետության բանակի բարձրագույն վիճական կառուցյան՝ վիճական նախարարության ու նրա ապարատի, ձեռավորման աշխատանքները: Հայաստանի առաջին հանրապետությունը ունեցավ շորս վիճական նախարար: Այդ պաշտոնում միմյանց հաջորդեցին Հովհաննես Հախվերդյանը (1918 թ. հունիս—1919 թ. մարտ), Քրիստափոր Արարատյանը (1919 թ. մարտ—1920 թ. ապրիլ), Ռուբեն Տեր Մինայյանը (1920 թ. ապրիլ—նոյեմբեր) և Դրաստամատ Կանայյանը (Դրո) (1920 թ. նոյեմբեր—դեկտեմբեր):

Արդեն 1919 թ. ամռանը Հայաստանի Հանրապետության վիճական նախարարության կազմում որպես նրա վարչական մարմիններ գործում էին՝ վիճական շտաբը (կոչվում էր նաև գլխավոր վիճական սպայակույտ), որը բաղկացած էր զորահավաքային ու հրահանգչական բաժիններից, գրասենյակից ու շտաբի վաշտից, ինչպես նաև իրենտանային, ռազմատեխնիկական, համբարակային, վիճական նախարարության գեներալ-վերահսկիչի, զորքերի բռնակարանավորման, ռազմասանիտարական, ռազմաասանաբուժական վարչությունները, վիճական դատարանը և ռազմադատախանական հսկողության հիմնարկությունները¹²:

Հայաստանի Հանրապետության վիճական նախարարի 1918 թ. հոկտեմբերի 27-ի հմ. 36 իրամանով նախարարության այդ վարչություններում և հիմնարկություններում պաշտոնների նշանակվելին նախկին հայկական կորպուսի շտաբի բարձրաստիճան վիճականները: Այսպես՝ վիճական նախարարության գլխավոր վիճական շտաբի պետ նշանակվել է գեներալ-մայոր Արքահամ Դոլորիսանյանը, իրենտանային վարչության պետ՝ գեներալ-մայոր Կոստանդին Ղամայյանը, համբարակային

վարչության պետ՝ գեներալ-մայոր Չումարովը, վիճական դատարանի նախագահ նշանակվել է գեներալ-մայոր Քիշմիջանը, իսկ սանհիտարական վարչության պետ՝ արքունական խորհրդական Պատիկյանը: Նախարարության գլխավոր վերահսկիչի պաշտոնում նշանակվել է տիտուլյար խորհրդական Վարդանվը, իսկ անասնաբուժական վարչության պետ՝ դասային աստիճանավոր Վարդանյանը¹³:

1919 թ. մկրին ռազմական նախարարությանն առընթեր ստեղծվեց նաև ռազմական խորհուրդ, որը կողեգիալ ձեւով պետք է քննարկեր ռազմական շինարարության ու մարտական գործողությունների սկզբունքային հարցերը և որոշումներ կայացներ դրանց վերաբերյալ: Ռազմական խորհրդի կազմի մեջ մտան դիմիկայի ասորաբաժանների ավագ զորահամանատարներն ու վիճական նախարարության վարչությունների պետները¹⁴: 1919 թ. մարտի 25-ին այդ խորհրդի անդինուի նախագահ նըշանակվել նախկին հայկական կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ռ. Լ. Նազարեթյանը¹⁵: Որոշ ժամանակ անց Հայաստանի կառավարության ապրիլի 24-ի հրամանագրով նրան հանձնարկեց նաև Հայաստանի Հանրապետության զորքերի գլխավոր հրամանատարի (սպարապետի) պարտականությունը¹⁶:

Սուածին համաշխարհային պատերազմում թուրքիայի պարտությունից (1918 թ. հոկտեմբերի 30) հետո, օգտվելով արտաքին քարենապատ պայմաններից (մասնավորապես Բաթումի պայմանագրի ուժը կորցնելու հանգամանքից), Հայաստանի կառավարությունը հնարավոր գտավ կտրուկ կերպով ավելացնելու հանրապետության վիճական պահանջմանը: Այսպես, եթե 1918 թ. վերջին հայկական առանձին դիմիկայի շարքերում և վիճական նախարարության համակարգում ծառայում էին մոտ 16.000

¹³ Տես նույն տեղում, գ. 40, թ. 71:

¹⁴ Տես ՀՀ ՊԿՊ, ֆ. 45, գ. 1, գ. 32, թ. 2:

¹⁵ Տես ՀՀ ՊԿՊ, ֆ. 204, գ. 1, գ. 131, թ. 4:

¹⁶ Տես նույն տեղում, գ. 129, թ. 1:

¹² Տես նույն տեղում, գ. 51, թ. 161:

մարդ¹⁷, ապա 1919 թ. վերջին հայկական բանակի թվակազմը հասնում էր մոտ 30.000-ի¹⁸, իսկ 1920 թ. նոյեմբերին՝ 40.000-ի¹⁹ (սերառայալ թիկունքային ծառայությունները, զինվորական ուստիկանության ստորաբաժանումները և կամավորական խմբերը):

Աղքանական ջրանում, ավելի ճիշտ՝ 1918 թ. մինչև 1920 թ. մայիսը, Հայաստանի Հանրապետության բանակի սպառավինումը տեղի էր ունենում հիմնականում ռուսական նախկին Կովկասյան բանակի կողմից Հայաստանի տարածքում թողնված զենքի և զինամթերքի հաշվին:

1918 թ. սեպտեմբերի դրությամբ հայկական բանակի հետևակի հիմնական զենքը ռուսական 7,62 մմ-ոց «Մուսին» համակարգի նորագիծ հրացաններն էին: Բայց դրանից սպառավինության մեջ կային նաև «Լեբեճ» և, ժամանակի համար արդեն հնացած, «Քերդանկա» համակարգի հրացաններ: Գնդացիրներից բանակի սպառավինության մեջ էին «Մաքսիմ», «Գոլու», «Լյուիս», ինչպես նաև ոչ մեծ բանակությամբ այլ համակարգերից գնդացիրներ: Հայկական բանակի հըրենտանին բաղկացած էր հիմնականում մարտում հետևազորին աջակցելու համար նախատեսված 3 մատուաչափանոց թերեւ և լեռնային թնդանոթներից, ինչպես նաև ռուսական մակնիշի 48 մմ-ոց հառորդիցներից: Բանակի սպառավինության մեջ էին գտնվում նաև սառը վիճատեսակները, ինչպիսին էին սվինները, թրերը և դաշուլները²⁰: Բանակի հանդերձանքը ռուսական արտադրության էր, որ մասնակի էր ռուսական զորքերից:

Հայկական բանակի կառուցվածքի մեջ մտնում էին նաև ավիացիոն ջոկատը և Սևանի լճային նավատորմիկը, որը բազավորված էր Ելենովկայում (այժմ՝ Սևան քաղաք): Ավիացուկատը, որի տրամադրության տակ կային ռուսական բանակից մնացած ինքնաթիւններ, կազմա-

վորվել էր 1918 թ. օգոստոսի վերջին հայկական կորպուսի կազմի մեջ մտած 3-րդ Կովկասյան ավիացուկատի հիմքի վրա: Նրա առաջին հրամանատարն էր օդաչու պորուչիկ Վոհապովը:

1919 թ. մարտին, Կարսը Հայաստանին վերադարձվելուց հետո, այդտեղ ավարտվեցին նոր հայկական ավիացուկատի կազմավորման աշխատանքները: Կարճ ժամանակամիջոցում (մինչև 1919 թ. հոկտեմբեր) այստեղ կարգավորվեցին պահեստները և հանգարները, կարգի բնրվեցին թոփշադաշտը և ինքնաթիւնների նորոգման ու հավաքման արիեստանոցները: Հայկական ավիացուկատը հիմնականում համարված էր «Վուազն», «Մորան» և «Նյուպոր» մակնիշի ինքնաթիւններով, որոնց թիվը անսարքների հետ մեկտեղ 8 էր: Սակայն Հայաստանում ավիապահեստամանքի բացակայության պատճառով ինքնաթիւնների մի զգայի մասը մշտապես գտնվում էր անսարք վիճակում: 1919 թ. վերջին ավիացուկատում թոփշի համար պիտանի էին միայն մեկ «Մորան» և մեկ «Նյուպոր» մակնիշի ինքնաթիւններ²¹:

Նոր ինքնաթիւններով ավիացուկատի համարման նպատակով Ֆրանսիա գործողվեց կապիտան Գույանը, որը Հայաստանի կառավարության առաջարքանորով Սամսոն Ա2Ա մակնիշի երկու նոր ինքնաթիւնները, որոնց արագությունը 200 կմ/ժամ էր, պետք է օգտագործվեին ուժակութման և հետախուզական նպատակներով²²:

1919 թ. փետրվարի 28-ի դրությամբ, հայկական ավիացուկատի անձնակազմում հրամանատարից բայց կային 5 վինդուկան օդաչու, մեկ դիտորդ, մեկ ավիամեխանիկ-հրահանգիչ, երեք շարժչագործ (մոտորիստ), շարժիչագործի վեց օգնական, երկու ավտովարորդ, ավտովարորդի 10 օգնական և 10 վարպետ²³:

Ավիացուկատը մասնակցել է պանական մարտական գործողությունների, ո-

¹⁷ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, գ. 1, գ. 32, թթ. 1-22:

¹⁸ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 1, գ. 254, թ. 90:

¹⁹ Տես Ա. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 484-485:

²⁰ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 204, գ. 1, գ. 41, թ. 5:

²¹ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, գ. 1, գ. 79, թ. 46-53:

²² Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 1, գ. 442, թ. 165:

²³ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 35, թ. 53:

բոնց ընթացքում թշնամու վրա կատարել է 30 օմբանետում²⁴:

Սևանա լճի նավատորմիկը, որը ըստ պաղպում էր ուղևորների և ռազմաբեռների փոխադրմամբ, մկրում բաղկացած



Ռուբեն Տեր Մինասյան (Ռուբեն),
Հայաստանի Հանրապետության
վիճական նախարար
(1920 թ. ապրիլ–նոյեմբեր)

Էր շարժիչներով օժիված մի քանի թիառնավերից և մոտ 1000 փութ տարողությամբ «Աշուտ Երկաթ» ռազմաբեռնատար երկայմ առաջատանավից, որի վրա տեղադրված էին մեկ թնդանոթ, երկու գնդապիր և լուսարձակ²⁵: Սևանի նավատորմիկի համարման նպատակով 1920 թ. սեպտեմբերին Շարուրից Երևանի միջով Ելենովկա փոխադրվեց ռուսական բանակից մնացած (նախատեսված էր այն ուղարկել Վան) «Սեստրիցա Նյուշա» նավը²⁶, որը վերանվանվեց «Գեղանուշ»: Սևանա լճի նավատորմիկի անմիջական կազմակերպիչն էր ծովակալության սպա Շումանյանը: Նրանից բացի, նավատորմիկի ձևավորման գործում մեծ ներ-

դրում ունեցան նաև Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ Տիգրան Շամինուրը (Արան կատակով անվանում էին ծովակալ Սեյմուր), ծովակալության սպաներ Գարագաշանը, Հերյանը և Կոստան Զարյանը²⁷:

Հայաստանի Հանրապետության վիճական նախարարության կատարած աշխատանքի մասին կազմված արխիվային համառոտ տեղեկագրից իմանում ենք, որ միայն 1920 թ. մայիսի 1-ից մինչև օգոստոսի 1-ը ժամանակատվածում Սևանի լճային նավատորմիկը կատարել է ընդամենը 76 հածում՝ անցնելով 6448 վերատ տարածություն: Այդ ընթացքում նրա միջոցով փոխադրվել են 342 մարդ և 9298 փութ համբարձակային, 1396 փութ իրենանային և 2130 փութ այլ նախարարությունների բեռներ²⁸:

Հայաստանի Հանրապետության բանակի կանոնավոր գորամաները և ստորաբաժանումները համալրվում էին Հայաստանի խորհրդարանի և կառավարության կողմից ընդունված օրենքների ու որոշումների հիման վրա:

Համաձայն կառավարության 1919 թ. հունիսի 1-ի «Ազգաբնակչության վիճակագրության, վիճապարտների հաշվառման ու զորակոչ մասին» օրենքի, հանրապետության բանակում Հայաստանի քաղաքացիների վիճական ծառայության ընդհանուր ժամկետը սահմանվում էր 18 տարի, որից 3 տարին՝ որպես իսկական վիճական ծառայություն, իսկ 15 տարին՝ որպես պահեստապորային: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները իսկական վիճական ծառայության էին զորակոչվում 18 տարեկան հասակում²⁹:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում առվիրող ուսանողները բանակ էին զորակոչվում 20 տարեկան հասակում, իսկ միջնակարգ դպրոցի աշակերտները զորակոչի ենթակա էին միայն դպրոցն ավարտելուց հետո: Թե՛

²⁴ Տես Ա. Վրացյան, նշվ. աշխ., էջ 435, նոյեմբ., Կյանքի ուղիներով, Գահիրեն, 1955, հ. Ա, էջ 223:

²⁵ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 142, թ. 186:

²⁶ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 190, թ. 117:

առաջինների և թե՛ վերջինների համար բանակում ծառայության ընդհանուր ժամկետը նույնպես սահմանված էր 18 տարի, որից 9 ամիսը՝ որպես խակական ծառայություն, իսկ 17 տարի և 3 ամիսը՝ որպես պահեստապորային:

Նույն օրենքով սահմանվում էր նաև Հայաստանի 16—43 տարեկան արական սենյակ բոլոր քաղաքացիների պարտադիր ծառայության վիճական հաշվառում: Արտոնություններ տրվում էին անաշխատունակ ծնողներ ունեցող ընտանիքի միակ կիրակրողին³⁰: Զորակոչի ներթական չեին նաև փոստ-հեռուստային հիմնարկությունների ծառայողները, երկաթգծի, միջինայի, դատական մարմինների աշխատավիճակները, ինչպես նաև գավառային ու թաղային կոմիսարները և նրանց օգնականները³¹:

Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները (ժամանակականներ, ոռուներ, լեներ, ուկրաինացիներ, ասորիներ, հույներ և այլն) վիճական ծառայության չեին զորակոչվում: Ազգնական շրջանում, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության սահմանների անորոշությունը և հպատակության վերաբերյալ օրենքի բացակայությունը, բանակ զորակոչվելու նշանական չեին նաև թուրքահպատակ և իրանահպատակ հայերը: 1919 թ. հուլիսի 18-ին գլխավոր վիճական շտաբի գորահավաքային վարչության պետ գնդապետ Մակենզի կողմից այս հարցը ներկայացվում է հանրապետության վարչապետին³², և թույլտվություն է ստացվում արևմտահայերին նույնպես զորակոչելու վիճական ծառայության: Դրա վերաբերյալ օրենքը ընդունվում է 1919 թ. սեպտեմբերի 9-ին³³:

Հայաստանում պարող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից հայկական բանակի շարքերը զորակոչվում էին միայն եվդիները, որոնց թույլատրված էր ծառայել կամա-

փորական սկզբունքներով գործող իրենց ազգային զորամասներում: Այսպես, օրինակ, գեներալ Մ. Միհկյանի հրամանագրից իմանում ենք, որ 1918 թ. վերջին հայկական առանձին դիվիզիայի կազմում գործել է եպիճի կամավորներից կազմավորված մի գումարտակ, որը մինչ այդ ակտիվ մասնակցություն էր ունեցել 1918 թ. թուրքերի դեմ մղված մայհայան հերոսամարտերին: Նրա հրամանատար Յուսուզ Բեկ Թեյմուրովը դիվիզիայի հրամանատարի 1918 թ. նոյեմբերի 7-ի հմ. 34 հրամանով պարզեսատրվեց սուրբ Գեորգի 4-րդ աստիճանի խաչ շրանցանով Սարդարապատի ճակատամարտում երեսայան զորացոլատին աջակցություն ցուցաբերելու համար³⁴: Բարումում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Զվերնի կողմից կազմված տեղեկագրից պարզվում է, որ 1920 թ. հոկտեմբերի 25-ի դրությամբ հայկական բանակի հեծելազորի կազմում գործում էր եվդիներից կազմված մի հեծյալ դիվիզիոն, որը տեղաբաշխված էր Էջմիածնում: Նրա կազմում կար 200 ձիավոր և երեք սպա: Եպիճիական հեծյալ դիվիզիոնի հրամանատարն էր գնդապետ Շահբարովը: Այդ փաստաթղթից իմանում ենք նաև, որ նույն ժամանակամիջոցում եվդիներից կազմված մի հեծյալ դիվիզիոն էլ գործում էր Գրոյի հրամանատարության տակ գտնվող Սուրմարտի զորացոլատի կազմում³⁵:

Հայաստանի Հանրապետության բանակի զորամասները և ստորաբաժանումները, համաձայն ընդունված կարգի, պետք է համարվեն ըստ սահմանված հաստիքների: Սակայն իրականում հայկական բանակի ստորաբաժանումներից ոչ մենք մարդկանց և ձիերի անրավարար բանակության պատճառով համարված չեն ըստ հաստիքով նախատեսվածից: Նույնիսկ երևանյան զորացոլատը (հրամանատար՝ Գրոյ), որը համարվում էր Հայաստանի Հանրապետության բանակի ամենակազմակերպված և մարտունակ զորամիավորումնե-

³⁰ Տես նույն տեղում, գ. 65, թ. 129:

³¹ Տես ՀՀ ՊԿԱ, ֆ. 200, գ. 1, գ. 86, թ. 45:

³² Տես նույն տեղում, գ. 35, թ. 306:

³³ Տես նույն տեղում, գ. 86, թ. 45:

³⁴ Տես ՀՀ ՊԿԱ, ֆ. 204, գ. 1, գ. 42, թ. 145:

³⁵ Տես նույն տեղում, գ. 486, թ. 366:



Գրաստամատ Կանայան (Դրո),
Հայաստանի Հանրապետության
վիճակական նախարար
(1920 թ. նոյեմբեր–դեկտեմբեր)

Իից մեջը, 1919 թ. մարտի 12-ի դրությամբ ուներ անձնական կազմի զգալի պակասություն: Օրինակ՝ այդ զորագույնի կազմի մեջ մտնող 2-րդ հետևակային գունդը, որը ըստ հաստիքի բաղկացած էր 665 հոգուց, ուներ ընդամենը 482 սին, իսկ 3-րդ հետևակային գունդը՝ 1058 հոգու փոխարեն համարված էր միայն 665-ով³⁶:

Չորամասերի անձնական կազմի անդրակազմության պատճառներից հիմնականը դասալրությունն էր, որը երբեմն հասնում էր մեծ չափերի: Այսպիսի 1919 թ. հուլիսի տվյալներով վիճակոչից խուսափող նորակոշիկների ու վիճապարտների թիվը ամբողջ Հայաստանում 17.665 էր³⁷, իսկ մարտական զորամասերը լրած վիճակուների թիվը միայն 1919 թ. մարտից մինչև դեկտեմբեր՝ 5728³⁸: 1919 թ. սեպտեմբերի 18-ին այդ հարցը քննարկվում է Հայաստանի կառավարությունում: Զինվորական նա-

խարար Քրիտափոր Արարատյանի կարծիքով դասալրության դրդող հիմնական պատճառներն էին պատերազմական դրությունը, որում անվերջ գտնվում էր հանրապետությունը, բանակում վիճական ծառայության ծանր պայմանները (մշտական արշավանքները, ծառայության ժամկետի մշտական երկարաձգումը, վիճակուների մերկ և կիսաքաղյա վիճակը և այլն)³⁹:

Բանի որ կարգապահությունը բանակի կազմակերպվածության ու մարտունակության կարևոր գրավականն է, ուստի խատագույն պայքար էր տարփում դասալրության դեմ: Այսպիսի 1919 թ. հուլիսի 24-ին ուժի մեջ մտավ Հայաստանի Հանրապետության կառավարության «Մահապատճի մասին» օրենքը, որի համաձայն երկրում որպես պատճի առավելագույն չափ մտցվում էր մահապատճի՝ գնդակահարություն: Այդ օրենքով պատճի առավելագույն չափը տարածվում էր ոչ միայն վիճառայուների, այլև այն պետական պաշտոնյաների վրա, ովքեր կատարում են նման գործորությունները⁴⁰: Միևնույն ժամանակ Հայաստանի կառավարությունը խստագույն միջոցներ ձեռնարկեց դասալրություններին թարցնող անձանց նկատմամբ: Այսպիսի «Զորքերում դասալրության դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն իսկական վիճառայության մեջ գտնվող դասալրությունը անձինք, ինչպես նաև պահեստափորում վիճական աստիճան ունենող այն քաղաքացիները, ովքեր խուսափում էին խկույան վիճակական ծառայության համար զորակոշին կամ ուսումնական հավաքներին ներկայանալուց, ենթակա էին կալանքի 3-ից մինչև 4 ամիս ժամկետով: Դասալրությունների հետ բնակվող և միտումնավոր կերպով նրանց թարցնող անձինք ենթարկվում էին կալանքի՝ 1-ից մինչև 6 ամիս ժամկետով կամ դրամական տուգանքի՝ մինչև 200.000 ռուբլի և

³⁶ Տես ՀՀ ՊԿԱ, ֆ. 199, գ. 1, գ. 35, թ. 147:

³⁷ Տես նույն տեղում, գ. 89, թ. 350, նաև՝ Ակ.

Ֆափուճյան, Հայաստանի Հանրապետության քաղաքական, վիճակական, տնտեսական, ընկերային կապությունը, Գահիքն, 1972, էջ 253:

³⁸ Տես ՀՀ ՊԿԱ, ֆ. 199, գ. 1, գ. 89, թ. 350:

³⁹ Տես նույն տեղում, գ. 89, 1-ին մաս, թ. 71:

⁴⁰ Տես նույն տեղում, գ. 78, թ. 18, նաև՝ Հայաստարության դարձեր, 1919 թ. սեպտեմբերի 4:

ПРИКЛЭЗ

Военному Ведомству Республики Армения

№ 279

20 июля 1919 года в г. Эривань.
Объявляю про семя коню заповеди о прахъненіи смертной казни, утвержденную Установлением Совета Министровъ этого государства 16/19 июня, призываю къ начальствующимъ западъ нечестивы и виновныъ солдатъ, за казнь имѣющими преступлений виновныъ подлагаются смертной казни. Вновь принесенные солдатъ должны быть подвергнуты смертной казни, а также закономъ воинской ратьи всѣ сбояхъ, пустыхъ и изъ уединенійъ, а нестрадающихъ, и второй разъ, по прибытии въ часть или команду.

И приложилъ коня закона.

(Св. В. Г., Ник. О.)

Подпись: Военный Министръ,

Генерал-Майоръ *Левонянъ*.

**ЗАКОНЪ
о смертной казни.**

Внести смертную казнь, черезъ разстрѣлываніе, какъ высшую жертву национальныхъ, срочно указанныхъ, въ подлежащихъ статьяхъ закона наскажайтъ для того, чтобы совершилъ одно изъ тяжчайшихъ преступлений народъ.

1. Кто совершилъ Государственный переворотъ противъ Республики Армения (ст. ст. 105, 106, 110, 111¹, 8 и 111², 116 и 119).

2. Кто приметъ участіе въ японской воинской противъ существующихъ властей (ст. ст. 263 и 268 Узак., до Нак. и 123 ст. Уг. Узак.).

3. Кто умышленно спичожитъ или причинитъ поврежденіе телеграфа и автомобилодорожного пути, хотя бы хибетъ злоумышленника въ били совершены безъ причина настѣніи подвергнутъ опасности, съ дующихъ отъ дальнейшой дороги пасажирамъ или перевозимое имущество (1081, 1082, 3148 и 3144 Узак. о Наказахъ).

4. Кто изъ военнонадзиранныхъ ученикъ:

а) Побѣдъ къ исправителю, бѣгствоъ съ поля сраженія, сопровождающее бѣгство своего члена во время бою и уклонение отъ участія въ бою (ст. ст. 180, 187, 243, 256—ХХII чл. С. В. И. над. ф-е 1909 г.)

б) Подговаръ, подстрекательство или возбужденіе съ единѣмъ бѣгство и уклоненіе отъ сопротивленія противнику (ст. 216, тобъ же книжк. и Сп.).

в) Сиючъ изъ пѣтий безъ единого изънѣкъ (ст. 248 и 251, тобъ же книжк. и Сп.).

г) Сиючъ изъ пѣтий изъ карауда, изъ виду воришка (ст. 158, тобъ же книжк. и Сп.).

д) Попыткъ дѣятельности противъ начальника (ст. ст. 2 ч. 95 2 ч. 3, в. ст. 101, тобъ же книжк. и Сп.).

Հայաստանի Հանրապետության վիճակական նախարար Բ. Արարատյանի իրամանը
վիճակին մահապատճի մասին օրենքին ձանութացնելու վերաբերյալ
(կիս տրված է օրենքի տեքստի պատճենը)

վրկվում էին պետական նպաստներ սուանալու իրավունքից⁴¹:

Հայաստանի Հանրապետության բանակի սպայական կազմը հիմնականում բաղկացած էր ոռուական վիճակության գիմնազիաներ և ուսումնարաններ ավարտած, ոռուական բանակում ծառայած, առաջին համաշխարհային պատերապմի ուսպմածակատներում կոփած կադրերից: Խնչպես արդեն նշել ենք, Արքանց հայկական բանակային կորպուսի անձնական կազմում հավաքագրելու անհրաժեշտությունն առաջացավ 1917 թ. վերջին, ոռուական բանակի կողմից Կովկասյան ուսպմածակատի լրումից ու մերկացումից հետո: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության վիճակը ուժերի գրլիավոր հրամանատար Թովմաս Նազարենյանը, որը ծնվել է 1846 թ. Թիֆլիսի նահանգում, ավարտել էր Միխայլովով-Վորոնեժյան և Մուկայի վիճական գիմնազիաները, իսկ հետո նաև՝ Ալեքսանդրյան վիճական ուսումնարանը: Նա մասնակցել է 1877–1878 թթ. ոռուածառուրքական և 1904–1905 թթ. ոռուածապոնական պատերապմներին: Գեներալ-մայորի վիճական կոչումը նրան շնորհվել էր 1907 թ.⁴²: Զանազան մարտական ծառայությունների համար նա պարզեցատրվել էր Սուրբ Սուտամիլալի 3-րդ և 1-ին, Աննայի 3-րդ և 2-րդ, Վաղիմիրի 3-րդ և 2-րդ, Սուրբ Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշաններով ու ոսկե զենքով⁴³:

Հայաստանի Հանրապետության երկրորդ վիճական նախարար գեներալ-մայոր Քրիստոֆոր Արարատյանը ավարտել էր Թիֆլիսի կադետական կորպուսը, Պետերբուրգի Միխայլովյան հետևակային վիճական ուսումնարանը և Ցարսկոյե Սելիցի սպայական դրաբուց: Մասնակցել է առաջին համաշխարհային պատերապմին, եղել է Հարավարևմտյան, Հյուսիս-արևմտյան և Կովկասյան ուսպմածակատներում:

Հայկական առանձին դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Մովսես

Միլիկյանը ավարտել էր Մոսկվայի կադետական դպրոցը (1882 թ.) և Ալեքսանդր 3-րդի անվան վիճական ուսումնարանը (1884 թ.), իսկ 1904 թ. ստացել էր սպայական հրաձգային դպրոցի վկայագիր: 1914 թվականից նա ծառայել է Կովկասյան ռազմական օկրուգում, սկզբում որպես Երևանի պարետի օգնական, ապա գումարտակի, գնդի և հետևակային դիվիզիայի հրամանատար: Մասնակցել է Կովկասյան ռազմածակատի մարտական գործողություններին, 1918 թ. գլխավորել է Վանի զորախումբը: Արժանացել է բազմաթիվ մարտական շքանշաններից⁴⁴:

Հայաստանի Հանրապետության վիճակը ուժերի գիտավոր վիճական շտաբի պետ գեներալ-մայոր Դորոխանյանը ոռուական բանակի շարքերում ծառայել էր ավելի քան 25 տարի: Առաջին համաշխարհային պատերապմի տարիներին կատարած տարբեր սիրագործությունների համար նա պարզեցատրվել էր Սուրբ Գեորգիի շքանշանով և ոսկե զենքով⁴⁵:

Բայց նշված բարձրաստիճան սպաներից, Հայաստանի Հանրապետության վիճակը ուժերի կառույցներում զանազան պատուններ էին վարում գեներալներ Յուլիան Ֆրմենվիլսկին, Խվան Մերգեյի Բաղրամովը, Պողոս Բեկ Փիրումյանը, Ալեքսանդր Բեյ Մամիկոնյանը, Պավել Անդրեյի Սելիկ Շահնազարովը, Սելիկ Սուրապյանը, Գրիգորի Խորումանսկին, Սերգեյ Խվանի Հաջանը, Դմիտրի Սնդրենակին, Շահբուղալյանը, Խվան հվանովիչ Վահիլը, գնդապետներ Միքայել Սերգեյի Սելիկ Աղամալյանը, Ա. Կ. Մելիքովը, Միքայել Սելիկ Շահնազարյանը, Սերգեյ Թումանյանը, Ստեփանյանը, Պապոնյանը, Պրիտումանովը, Ղորդանյանը, Կավիմիրովը, Գեորգ Բարսեղի Բարաջանյանը, Պյուտր Աթանը, Ապրենյանը, Զատիկյանը, Կոստանդին Սելիկ Փարաջանյանը, Ալեքսանդր Տեր Ներսիսյանը և ուրիշներ:

⁴¹ Shu ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 78, թ. 264:

⁴² Shu ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, գ. 1, գ. 16, թ. 1:

⁴³ տես նույն տեղում, գ. 41, թ. 8:

⁴⁴ Shu ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 35, թ. 238:

Մեր մոտավոր հաշվարկներով 1918 – 1920 թթ. Հայաստանի Հանրապետության բանակում ծառայում էին ավելի քան 20 գեներալներ և 60-ից ավելի գրադապետներ:

Հարկ է նշել, որ բոլոր այդ բարձրաստիճան սպաները ևս անցել էին առաջին համաշխարհային պատերազմի թոփուրով և ունեին հարուստ մարտական փորձ: Նրանք անկուսակցական էին և չէին պատկանում որևէ քաղաքական հոսանքի, սակայն, լինելով հայրենասեր, պազային շահերով տոգորված և ոռուական բանակի սպայի երդմանը հավատարիմ զինվորականներ, սրբությամբ էին կատարում իրենց զինվորական պարտօր հայրենիքի հանդիպ:

Հայկական բանակում պահպանված էին այն սպայական, շարքային և դասային զինվորական կոչումները և աստիճանները, որոնք գոյություն ունեին ոռուական բանակում: Այդ կոչումներն էին՝ պրապորչիկ (վառատար), պոդապորչիկ (փոխտեղակալ), պորուչիկ (տեղակալ), շտաբս-կապիտան (փոխգլխապետ), կապիտան (գլխապետ), պոդապորչիկ (փոխգլխապետ), պոլկովնիկ (գնդապետ), գեներալ-մայոր (կրտսեր զորագոր), գեներալ-լեյտենանտ (ավագ զորագոր) և ինֆանտերիայի գեներալ, կամ լրիվ գեներալ (զորագոր)⁴⁶: Բանակային շարքային կազմի աստիճաններն էին՝ շարքային (զինվոր), եֆեյտոր (հնգապետ), կրտսեր ենթասպա (տասնապետ), ավագ ենթասպա (քառանինգապետ), ֆելդֆերել (համբական) և պոդապորչիկ (փոխվառատար)⁴⁷: Դասային աստիճաններն էին՝ կոլեժակի ու գիտարատոր (կոլեգիական ու գիտարատոր), գուրենոսակի սեմենտար (նահանգային քարտուղար), կոլեժակի սեկրետար (կոլեգիական քարտուղար), տիտուլարնի սովորնիկ (տիտուլար խորհրդական), կոլեժակի ասեսոր (կոլեգիական ասեսոր), նադվորնի սովորնիկ (արքունական խորհրդական), կոլեժակի, կամ ստատուկի, սովորնիկ (կոլեգիա-

կան, կամ պիտական, խորհրդական), տայնի սովորնիկ (գաղտնի խորհրդական) և դեյտովիտելնի տայնի սովորնիկ (խկական գաղտնի խորհրդական): Այդ դասային աստիճանները հավասարապոր էին, համապատասխանաբար, վառատարի, փոխտեղակալի, տեղակալի, գլխապետի, փոխգլխապետի, գնդապետի, կըրտսեր զորագորի, ավագ զորագորի և փորագորի, կամ լրիվ գեներալակի, սպայական աստիճաններին⁴⁸: Նշենք, որ հայկական բանակում ամենաբարձր դասային աստիճանը արքունական խորհրդականն էր: Այդ աստիճանն ունեին հայկական դիվիզիայի համբարակ և քժիշտ Տրոիցիկին և Տեր Միքայելյանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության սանհիտարական վարչության պետ Պապիկյանը:

Զինվորական կոչումների և դասային աստիճանների այդ համակարգը հաստատված էր նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքով (աստիճանաբաշխության մասին 1918 թ. դեկտեմբերի 25-ի օրենքը): Սպաները և դասային աստիճանավորները Հայաստանի Հանրապետության բանակի գորամասերում և հիմնարկություններում ծառայության էին ընդունվում այն զինվորական աստիճանով, որը նրանք ունեցել են ոռուական բանակում: Ինչպես սպաների, այնպես էլ դասային աստիճանավորների աստիճանաբաշխումը կատարվում էր այն կանոնների և օրենքների հիման վրա, որոնք գոյություն ունեին ոռուական բանակում: Սպաների և աստիճանավորների աստիճանաբաշխման իրավունքը վերապահվում էր Հայաստանի կառավարությանը, և այն կատարվում էր զինվորական նախարարի առաջարկով⁴⁹:

Անդրադառնալով հայկական բանակի կազմակերպական համակարգին՝ զինվորական նախարար Ռուբեն Տեր Միքայելյանը իր հուշերում գրում է. «Զինվորական նախարարությունը պարզ մանրանկարն էր ոռուական զինվորա-

⁴⁶ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 1, գ. 442, թ. 569:

⁴⁷ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 89, թ. 209:

⁴⁸ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 1, գ. 442, թ. 205:

⁴⁹ Տես նույն տեղում, գ. 86, թ. 17-18:

կան նախարարության. իսկ բանակը իր ոգով, վարժությամբ և գործնակերպով նույնն, ինչ ոռւապես որևէ զորաբաժին: Դպուր չէ, որ հայկական բանակը կրիամարենի Դենիկինի բանակի մի մասը. նմանությունը մեծ էր...»⁵⁰:

Հայաստանի Հանրապետության բանակի սպաները կրում էին նաև ուսկաց (արսելքանո), խթան և թուր: Նրանք իրավունք ունեին կրելու նաև մարտերում ցուցաբերած խիվախության, քաջության ու հմտության համար նախկինում ստացած բոլոր մարտական մեղալները և շքանշանները⁵¹:

Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ եղավ իր սեփական մարտական շքանշանների ստեղծմանը: Այսպես, 1919 թ. մայիսի 26-ի Հայաստանի կառավարության որոշմամբ հաստատվեց «Հայրենիքին մատուցած ծառայության համար» շքանշանը, որի պատրաստման համար հատկացվեց 20.000 ռուբլի վարկ:⁵² 1920 թ. հունիսի 2-ին կառավարության համապատասխան օրենքով հաստատվեցին նաև «Սուրբ Վարդան Վորավար» և «Մեծն Տրդատ» մարտական շքանշանները⁵³: Շքանշանները պատրաստված էին սկարիչ Հակոբ Կոչոյանի նախագծով, իսկ մրցույթի հանձնաժողովի նախագահը անվանի ճարտարապետ ակադեմիկոս Ալեքսանդր Շամանյանն էր: Նախարարների խորհրդին վինայի կառավարական նախարար Ռուբեն Տեր Մինասյանի ներկայացրած վեկուցագրում նշվում էր, որ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ աստիճանի «Սուրբ Վարդան Վորավար» շքանշանով պետք է պարզեատըրվեին անձնական խիվախություն ցուցաբերած սպաներն ու վինայի կազմը հունվարի 5-րդ և 6-րդ աստիճանով՝ վորամասների, շտաբների հրամանատարներն ու պետերը՝ մարտական գործողությունների հմուտ դիմակարման համար: Այս շքանշանը համապատասխանում էր ոռւապեան առլր Գեորգիի խաչին և պետք է շընորիվեր ոռւապեան բանակում գոյութ-

⁵⁰ Շ. Տեր Մինասյան, նշվ. աշխ., էջ 332:

⁵¹ Տես ՀՀ ՊԿՊ, ֆ. 200, գ. 1, գ. 442, թ. 205:

⁵² Տես ՀՀ ՊԿՊ, ֆ. 199, գ. 1, գ. 65, թ. 64:

⁵³ Տես նկան տեղում, ց. 1, գ. 154, թ. 137:

յուն ունեցող կանոնների համաձայն, մինչև սեփական կանոնադրության ընդունումը:

«Մեծն Տրդատ» շքանշանով պարզաւորվում էին սպաները մարտական ծառայությունների համար: Այդ շքանշանով կարող էին պարզեատըրվել նաև քաղաքայի անձինք՝ հատուկ ծառայությունների համար: Ընդ որում, այդ շքանշանով պարզեատըրված սպաներին հանձնվում էր նաև հատուկ վենք (սուր)՝⁵⁴:

Հայկական բանակում որպես վինայի սպաներ Օլիվեր Բոլդվինի հուշերից⁵⁵ պարզվում է, որ նա պարզեատըրվել է այդ շքանշաններից մեկով, սակայն չի նշվում, թե հատկապես որ շքանշանով: Հայտնի է նաև, որ «Սուրբ Վարդան Վորավար» շքանշանով պարզեատըրվել է գնդապետ Նիկոլայ Թարխանյանը (Կուռոն) հայ-վրացական պատերազմի ժամանակ ցուցաբերած անձնական խիվախության համար⁵⁶:

Հայաստանի Հանրապետությունում փորձեր են արվել նաև հայկական բանակի համար տեղում սպայական կադրերի պատրաստման ուղղությամբ: Այդ նպատակով 1920 թ. գարնանը Երեվանում բացվեցին գլխավոր վինայի սպայական դասընթացներ և սպայական նախապատրաստման դրաբուց: Նույն թվականի սեպտեմբերին Ալեքսանդրապոլում նախաձեռնվեցին վինայի կազմը հայ-վրացական գիմնազիայի, իսկ Կարսում մեկամյա ուսուցմամբ վինայի սպայական ուսումնարանի կազմակերպման աշխատանքներ:

Խչպիս արդեն վերը նշեցինք, Հայաստանի Հանրապետության բանակի սպայական կազմը հիմնականում բաղկացած էր ոռւապեան կադետական կորպուսներ և վինայի սպայական ուսումնարաններ ավարտած, առաջին համաշխարհային պատերազմում ոռւապեան բանակի Արևմտյան և Կովկասյան ուազմաճակատ-

⁵⁴ Տես նույն տեղում, թ. 139:

⁵⁵ Տես Օլիվեր Բոլդվին, Վեց բանու և երկու հեղափոխություն, Ալեքսանդրիա, 1988, էջ 200:

⁵⁶ Տես Գ. Լազար, Դեմքեր հայ սպատագրական շարժումն, Գահիրե, 1949, էջ 388:

ԱՐ-ԱԶԻՒ ՏԵՐԻ 1920 ԱԳՐԱՐՆԱՅԻ, ԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ Խ 13

ԱՇԽԱՏԻԿ

Дорогами Гималая

~~ZUGZUGZUG 50 PFERD~~

—
—
—

Առաջնորդութեան եւ պատճեան 1-ի մասուն
առջեց մերժութեան համար 20 մէջ միայն 22 առթիվն ուղարկ
ուղարկու բայց առջեցուն առաջնորդութեան համար 21
առթիվութեան ուղարկու և բայց պատճեան
լուսավորութեան և ինքնաշխատութեան համար միայն մի առթիվ
ուղարկու և կոչու ուղարկութեան ուղարկու 2-րդ
պատճեան համար բայց պատճեան բայց առջեցուն
առջեց առաջնորդութեան համար 22 առթիվ
ուղարկու առջեցուն բայց պատճեան միայն մի առթիվ մասուն

Տայ հրամանը պատճենաբան է մաս, ուստի պա-
հանակ է, ու Այս նրանից մեջ պահպան է Ա-
մառ յափառության գովազնապահելու Խ-խ-
նչի Էլ-պահան համապահ ու ուղարկեն:

ШАУРЫ

ՀԱՅՈՒՐՈՒԹՅՈՒՆ. ՉԵ ԿԱԼ ԲԵՅ

Թարմք պիզրութենք անունգ այս-
տառապիտաննեց դրսելը առա բացեկի էնթերի
այսուհետեւ զարդելով եւ:

**Հայաստանի Հանրապետության վիճակական նախարարության
«Բազմիկ» շաբաթաթերթի 13-րդ համարի առաջին էջից**

Ներում ծառայած, հարուստ մարտական փորձ ունեցող հայպօֆի կադրերից: Սակայն պետք է նշել, որ նրանց մի զգալի մասը չէր տիրապեսում մայրենի լից-վին: Այդ էր պատճառը, որ հայկական բանակում՝ զորամասերում, շտարներում գրագրությունը (հրամանները,

Եյս մի առընդ շնորհցած պատճեանի կամքի մասին բազմաթիւ պատցոյցներ մեջ պահել են, սակայն այլովեադիւնքներից էն մեջը առ բաշխեց գրքացից առ պահանջանակութիւնում:

Տաղաւած տաղաւած բարեկի բարանձնելի
աշխատաքիւնն իր գրու վերցնոց առա-
բարեկիւնն այսօր էայ բազմաւայրքու մա-
տուցիւ առջևանձնին նև բազմպատկան
առանձնաւութեան

Եսկը մազով պարզեցի ուղարկությունը և մաս սկսած
առաջին ուղարկությունը աշխարհ նույ ուղա-
րկությունը մարդու արքունի ձևաբարքն ան տակ-
ի է առ ուղարկությունը առ անձնագիրը

ମୋର ଏ ପରିଦିଃ ନାହାନ୍-ଗୁଣିତ କେତେ
ଅର୍ଥାତ୍ ମରାର, ଆମଙ୍କ କରିବୁ-ବୁଝାଯା
ମରିବାକୁ କୌଣସିଲୁଗୁଡ଼ି ନାହାନ୍-ଗୁଣିତ
ଅର୍ଥାତ୍ ମରାର, ଆମଙ୍କ କରିବୁ-ବୁଝାଯା

հաշվետվությունները, զեկուցագրերը և
այլն) տարբում էր իհմնականում ռուսե-
րենով։ Սակայն երբ զինվորական նա-
խարար է նշանակվում Ռուբեն Տեր Մի-
նասյանը, մի շարք հրամաններ են ար-
ձակվում բանակում հայերեն լիբովի օգ-
տագրոծման վերաբերյալ։ Օրինակ՝ Տեր

Մինասյանի 1920 թ. հունիսի 26-ի հմ. 1073 շրջաբերական հրամանի համաձայն, որը բխում էր Հայաստանի Հանրապետության խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 26-ի⁵⁷ և Նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 30-ի օրենքներից, ոչ ուշ, քան մինչև նույն թվականի օգոստոսի 1-ը վիճակորական նախարարության ննթակայության տակ գտնվող բոլոր հիմնարկներում և զորամասերում գրագրությունը և գործափառությունը պետք է տարվեին միայն հայերենով: Բայց դրանից, նույն հրամանի համաձայն, բանակից զորացրման էին ննթակա բոլոր այն օտարազգի սպաները, աստիճանավորները և ապատ վարձու ծառայողները, ովքեր չեն տիրապետում հայոց լեզվին: Նրանք պարտավոր էին անմիջապես ձեռնամուխ լինել հայերենի տիրապետմանը: Հրամանով արգելվում էր նաև վիճակորական նախարարության համակարգում ծառայության ընդունել այն անձանց, որոնք չեն տիրապետում հայերենին⁵⁸: Այսպիսով, եթե 1920 թ. հունիսի 1-ի դրությամբ Հայաստանի բանակում ծառայում էին 256 օտարազգի սպաներ և աստիճանավորներ, ապա նույն թվականի սեպտեմբերի վերջին այդ հրամանի հիման վրա վիճակորական ծառայությունից ապատվեցին և բանակից զորացրվեցին 81 սպաներ և աստիճանավորներ:

Հայկական բանակի ազգայնացման գործն ավելի հստակ կազմակերպելու, ինչպես նաև վիճակը ուժերի անձնական կազմի մտավոր-կրթական կարիքներին ծառայելու նպատակով վիճակորական նախարարությունը ձեռնամուխ եղավ Երևանում «Ռազմիկ» անունով վիճակորական շաբաթաթերթի հրատարակմանը: Դատելով Հայաստանի Հանրապետության պատմության արխիվի 199-րդ ֆոնդում պահպող «Ռազմիկ» 13 համար-

⁵⁷ Այսուղի խոսքը վերաբերում է 1919 թ. դեկտեմբերի 26-ին Հայաստանի խորհրդարանի կողմից ընդունված «Պետական լեզվի մասին» օրենքին, ըստ որի Հայաստանում պաշտոնական լեզուն պետք է լիներ հայերենը, որի գործածումը առօրյայում պարստահի էր նաև բանակում:

⁵⁸ Տե՛ս ՀՀ ՊԿԱ, ֆ. 290, գ. 1, գ. 9, թ. 28:

ների բովանդակությունից՝ շաբաթաթերթը պարբերաբար անդրադառնում էր ոչ միայն Հայաստանի վիճակը ուժեղ ինտիրներին, այլև աշխարհի հեռու և մոտիկ թեժ կետերին, վիճատեսակներին և այլ հարցերի: Ձերթը անդրադառնում էր նաև ներքին կյանքի բազմաթիվ հարցերի՝ զորահավաքից խուսափողների խնդրին, երկրում տիրող բարոյական մթնոլորտին, տարածված վարակիչ հիվանդություններին, դասադիրներին աշակեցող պաշտոնյաների նկատմամբ պատժի միջոցների կիրառման անհրաժեշտությանը և կարևոր ու առաջնահերթ լուծում պահանջող մի շարք այլ հարցերի:

Ինչպես տեղեկանում ենք վիճակորական նախարարության գործունեության մասին կազմված պաշտոնական տեղեկագրից, չնայած փոխադրական միջոցների սուրբյանը և անբավարարությանը՝ «Ռազմիկի» համարները կանոնավոր կերպով ուղարկվում ու տարածվում էին բանակի բոլոր զորամասերում⁵⁹:

Այսպիսով, 1918 թ. մայիսի 28-ին Հայկական պետականության վերականգնման հետ միաժամանակ կազմվագրվեցին նաև նրա վիճակը ուժերը, որոնք կոչված էին պաշտպանելու հայ ժողովրդին և պետությունը արտաքին ու ներքին բարդ իրադրության պայմաններում:

Հայկական կորպուսի վերակազմակորման հետեւանքով ստեղծվեց առանձին դիվիզիա, իսկ առաջին համաշխարհային պատերազմում Ձուրքիայի պարտությունից հետո՝ երեք առանձին բրիգադներից բարկացած բանակ, որի թվակազմը 1919–1920 թթ. ընթացրում մըշտապես աճում էր:

Հայաստանի խորհրդայնացումից հետո հայկական բանակը ձևավարվեց, այլ վերակազմավորվեց խորհրդային Հայաստանի կարմիր բանակի: Քիչ անց, անհիմն բռնությունների հետևանքով, ձերքակալվեցին և խորհրդային Ռուսաստանի տարբեր բանտարին ճամբարներ արտրվեցին հայկական բանակի հարյուրափոր սպաներ, որոնցից շատերը խոշտանգվեցին և գնդակահարվեցին:

⁵⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 187:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

ФОРМИРОВАНИЕ АРМИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (1918—1920 ГГ.)

М. Л. КАРАПЕТЯН, кандидат исторических наук

